ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

## 2011 ԹՎԱԿԱՆԻՆ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ 1100-101

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-2012**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համախառն ներքին արդյունքը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, 2000-2011թթ. (ընթացիկ գներով) 3
Համախառն ներքին արդյունքը 2011թ. 4
Համախառն ներքին արդյունքն 2011թ. ըստ եռամսյակների 6
Համախառն ներքին արդյունքի հաշվարկն արտադրական եղանակով 2011թ. 9
Համախառն ներքին արդյունքի հաշվարկը եկամուտների ձևավորման եղանակով 2011թ. 11
Հավելված 1
**2009**
Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի 14
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի 15
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների 16
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների 17
**2010**
Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի 18
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի 19
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների 20
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների 21
**2011**
Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի 22
Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի 23
Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների 24
Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների 25
Համախառն ներքին արդյունքը 2009-2011թթ. 26
Հավելված 2
Մեթոդաբանական ցուցումներ 27

*Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:*

**Պայմանական նշաններ**

| | |
|---|---|
| տվյալները բացակայում են | -- |
| երևույթը բացակայում է | - |
| չնչին մեծություն | 0.0 |
| տվյալները ճշտված են | # |

# Համախառն ներքին արդյունքը և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, 2000-2011թթ. (ընթացիկ գներով)

| Տարիներ | ՀՆԱ | | ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով | | Տեղեկատու | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն դրամ | հազ. ԱՄՆ դոլար | հազ. դրամ | ԱՄՆ դոլար | դոլար/դրամ միջին տարեկան փոխարժեքը | բնակչության թվաքանակը, հազ. մարդ |
| 2000 | 23148.6 | 42907.5 | 172.2 | 319.3 | 539.52 | 134.4 |
| 2001 | 23880.7 | 43020.5 | 176.0 | 317.0 | 555.09 | 135.7 |
| 2002 | 26477.8 | 46198.4 | 193.8 | 338.2 | 573.15 | 136.6 |
| 2003 | 33883.7 | 58551.4 | 247.3 | 427.4 | 578.7 | 137.0 |
| 2004 | 42830.0 | 80485.5 | 312.2 | 586.6 | 532.15 | 137.2 |
| 2005 | 51379.4 | 112236.1 | 373.1 | 815.1 | 457.78 | 137.7 |
| 2006 | 61885.9 | 148789.1 | 449.4 | 1080.5 | 415.93 | 137.7 |
| 2007 | 70791.0 | 206791.7 | 510.0 | 1489.5 | 342.33 | 138.8 |
| 2008 | 87148.1 | 284825.6 | 623.1 | 2036.5 | 305.97 | 139.9 |
| 2009 | 102338.7 | 281699.7 | 723.7 | 1992.2 | 363.29 | 141.4 |
| 2010 | 118187.2 | 316304.6 | 823.2 | 2203.1 | 373.65 | 143.6 |
| 2011 | 135498.5 | 363764.1 | 936.1 | 2513.1 | 372.49 | 144.7 |

# Համախառն ներքին արդյունքը 2011թ.

2011թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համախառն ներքին արդյունքը շուկայական գներով կազմել է 135498.5 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9.1 տոկոսով՝ ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորի 5.1 տոկոս մակարդակի պայմաններում:




**Գծապատկեր 1 Համախառն ներքին արդյունքի աճի տեմպը (տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ) 1997-2011թթ.**

ՀՆԱ-ի իրական աճի վրա դրական ազդեցություն են ունեցել ապրանքների և ծառայությունների արտադրության ոլորտները ՝ համապատասխանաբար 10.6 և 10.5 տոկոս:

ՀՆԱ-ի աճը առանց զուտ հարկերի (ՀՆԱ հիմնական գներով) կազմել է 9.3 տոկոս, այսինքն՝ զուտ հարկերի 5.8 տոկոս աճը ՀՆԱ-ի իրական աճը չի ավելացրել:

ՀՆԱ-ի արձանագրված 9.1 տոկոս հավելաճի տեմպի 3.0 տոկոսային կետն ապահովել է գյուղատնտեսությունը, 1.9-ը՝ ֆինանսներ և վարկը, 1.3-ը՝ կապը:

Համախառն ներքին արդյունք

*Համախառն ներքին արդյունքը 2010-2011թթ.*

/մլն դրամ/

| | 2010թ. | 2011թ. | Իրական աճի տեմպը (տոկոսներով) |
|---|---|---|---|
| **Համախառն ներքին արդյունք** | **118187.2** | **135498.5** | **109.1** |
| Ապրանքների արտադրություն | 48286.9 | 54173.0 | 110.6 |
| Ծառայությունների արտադրություն | 65059.6 | 77763.0 | 110.5 |
| այդ թվում՝ շուկայական ծառայություններ | 32135.2 | 37567.0 | 116.2 |
| ոչ շուկայական ծառայություններ | 32924.4 | 40196.0 | 104.9 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | 4791.0 | 6679.6 | 136.8 |
| Ապրանքների զուտ հարկեր | 9631.7 | 10242.1 | 105.8 |

Ապրանքների արտադրության ոլորտը աճել է 10.6 տոկոսով, ընդ որում՝ արդյունաբերությունը՝ 3.9 տոկոսով, շինարարությունը՝ 4.9 տոկոսով, անտառային տնտեսությունը՝ 13.1 տոկոսով, գյուղատնտեսությունը՝ 27.4 տոկոսով:




**Գծապատկեր 2 Առանձին ճյուղերի իրական հավելաճի տեմպերը (տոկոսներով՝ 2010թ. նկատմամբ)**

Ծառայությունների արտադրության ոլորտի 10.5 տոկոս իրական աճը հիմնականում հետևանք է շուկայական ծառայությունների՝ 16.2, մասամբ էլ՝ ոչ շուկայական ծառայությունների՝ 4.9 տոկոս աճերի:

Շուկայական ծառայությունների աճը պայմանավորված է հիմնականում գյուղատնտեսության, վարկավորման և կապի ճյուղերում ավելացված արժեքների աճերով:

Շուկայական ծառայությունների ոլորտում 2011թ. 2010թ. նկատմամբ ավելացված արժեքի աճ գրանցվել է նաև առողջապահություն և սոցիալական ապահովության՝ 38.8

տոկոսով, կոմունալ տնտեսության և կենցաղային սպասարկման՝ 26.8 տոկոսով ճյուղերում:

2011թ. ՀՆԱ-ի գերակշռող մասը՝ 62.8 տոկոսը, ստեղծվել է մասնավոր հատվածում՝ 2010թ. 63.0 տոկոսի դիմաց: ՀՆԱ-ի մասնավոր հատվածի 13.9 տոկոսը կազմում է արդյունաբերությունը, 12.3 տոկոսը՝ գյուղատնտեսությունը, 11.0 տոկոսը՝ շինարարությունը: Ծառայությունների արտադրությունը կազմում է ՀՆԱ-ի մասնավոր հատվածի 25.6 տոկոսը, որից 7.0 տոկոսը՝ առևտուր և հանրային սնունդը:

2011թ. ՀՆԱ-ի մոտ 32.5 տոկոսն ստեղծվել է փոքր և միջին ձեռնարկությունների կողմից՝ 2010թ. 31.4 տոկոսի փոխարեն:

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն հանրապետությունում 2011թ. կազմել է 936.1 հազ. դրամ, 2513.0 ԱՄՆ դոլար կամ 1804.5 Եվրո, 2010թ.՝ 823.2 հազ. դրամի, 2203.1 ԱՄՆ դոլարի կամ 1659.6 Եվրոյի փոխարեն:

## Համախառն ներքին արդյունքը 2011թ. ըստ եռամսյակների

2011թ. արտադրված տարեկան ՀՆԱ-ն ունի հետևյալ եռամսյակային կառուցվածքը՝ առաջին եռամսյակ՝ 17.4 տոկոս (2010թ.՝ 17.8 տոկոս), երկրորդ եռամսյակ՝ 22.8 տոկոս (24.1 տոկոս), երրորդ եռամսյակ՝ 27.8 տոկոս (27.1 տոկոս) և չորրորդ եռամսյակ՝ 32.0 տոկոս (31.0տոկոս):

Համախառն ներքին արդյունքի արտադրության եռամսյակային տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ՀՆԱ-ի գերակշռող մասն արտադրվում է երրորդ և չորրորդ եռամսյակներում:




**Գծապատկեր 3 Առանձին ճյուղերի ավելացված արժեքների դինամիկան(հազ.դրամ) 2010-2011թթ.**

2011թ. երկրորդ կիսամյակում արտադրվել է ՀՆԱ-ի 59.8 տոկոսը, իսկ 2010թ.՝ 58.1տոկոսը: Այս երևույթը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության, շինարարության, առևտրի ու հանրային սննդի ճյուղերի սեզոնայնությամբ: Այսպես, եթե 2011թ. առաջին կիսամյակում այս ճյուղերի ավելացված արժեքների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կազմել է 24.9 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 8.7 տոկոս), ապա երրորդ եռամսյակում՝ 37.0 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 18.4 տոկոս), իսկ չորրորդ եռամսյակում՝ 32.0 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 12.4 տոկոս): 2010թ. նշված ճյուղերի հանրագումարի տեսակարար կշիռը երրորդ եռամսյակում կազմել է 32.4 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 13.9 տոկոս), իսկ չորրորդ եռամսյակում՝ 35.7 տոկոս (այդ թվում գյուղատնտեսությանը՝ 13.2 տոկոս):

*Համախառն ներքին արդյունքն ըստ եռամսյակների*

/ ընթացիկ գներով, մլն դրամ /

| | I | II | III | IV | Տարի | ՀՆԱ-ի իրական հավելաճի տեմպը (2011թ. տոկոսներով 2010թ. նկատմամբ) |
|---|---|---|---|---|---|---|
| **ՀՆԱ** | **23581.4** | **30865.9** | **37718.9** | **43332.3** | **135498.5** | **9.1** |
| Ապրանքների արտադրություն | 7578.0 | 12284.7 | 15814.8 | 18495.5 | 54173.0 | 10.6 |
| Ծառայությունների արտադրություն | 15565.9 | 17918.3 | 20725.7 | 23553.1 | 77763.0 | 10.5 |
| *այդ թվում՝* շուկայական ծառայություններ | 8224.7 | 8795.7 | 10038.3 | 10508.3 | 37567.0 | 16.2 |
| ոչ շուկայական ծառայություններ | 7341.2 | 9122.6 | 10687.4 | 13044.8 | 40196.0 | 4.9 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | 1512.0 | 1580.9 | 1712.1 | 1874.6 | 6679.6 | 36.8 |
| Ապրանքների զուտ հարկեր | 1949.5 | 2243.8 | 2890.5 | 3158.3 | 10242.1 | 5.8 |

Դիտարկելով ՀՆԱ-ի դինամիկան եռամսյակների կտրվածքով նկատում ենք, որ ՀՆԱ-ի իրական աճը պայմանավորված է հիմնական բաղադրիչների աճերով:

Տարվա ընթացքում ապրանքների արտադրության ոլորտում տեղի է ունեցել 5.0 տոկոսից մինչև 14.9 տոկոս աճ:

Ծառայությունների արտադրության ոլորտի ամենաբարձր աճի մակարդակը դիտվել է առաջին եռամսյակում, իսկ ամենացածրը՝ երկրորդ եռամսյակում, որը լրիվությամբ համընկնում է շուկայական ծառայությունների դինամիկայի հետ:

Ապրանքների զուտ հարկերի ամենաբարձր աճ նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ տեղի է ունեցել երրորդ եռամսյակում 15.5 տոկոսով, իսկ երկրորդ եռամսյակում արձանագրվել է 1.1 տոկոս նվազում:




**Գծապատկեր 4 ՀՆԱ-ի և նրա հիմնական բաղադրիչների դինամիկան (մլն դրամ) 2010-2011թթ.**

Ընդհանուր առմամբ, համախառն շահույթի և համախառն խառը եկամտի դինամիկան հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության առանձնահատկություններով: Այսպես, քանի որ գյուղատնտեսության համախառն արտադրանքի գերակշռող մասն արտադրվում է տնային տնտեսություններում, որոնց ստացած եկամուտը գրեթե լրիվությամբ հանդիսանում է խառը եկամուտ, ապա արտադրության ծավալների փոփոխությունը (որը համընկնում է ՀՆԱ-ի արտադրության դինամիկայի հետ) բերում է շահույթի և խառը եկամտի նմանօրինակ շարժերի:

2011թ. ապրանքների զուտ հարկերը աճել են բոլոր եռամսյակներում, սակայն եթե 2010թ. ապրանքների զուտ հարկերի աճը բարձր է առաջին եռամսյակում, ապա 2011թ.՝ երրորդ եռամսյակում:

Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության աճը 2011թ. 2010թ. նկատմամբ պայմանավորված է համարյա բոլոր եռամսյակների ընթացքում բոլոր ոլորտներում աշխատանքի վարձատրության աճով:

Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության կշռի ամենաբարձր մակարդակը 2011թ. դիտվում է չորրորդ եռամսյակում՝ ամբողջ տարվա աշխատանքի վարձատրության 31.5 տոկոսը, իսկ 2010թ. ամենաբարձր մակարդակը դիտվել է երրորդ եռամսյակում՝ 27.4 տոկոս:

Ինչ վերաբերում է արտադրության այլ զուտ հարկերի փոփոխությանը, ապա այն կախված չէ արտադրության ծավալների փոփոխություններից՝ կապված տվյալ խմբի

մեջ մտնող հարկատեսակների բնույթից: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշը աճել է 15.7 տոկոսով: 2011թ. բոլոր եռամսյակների ընթացքում տեղի է ունեցել արտադրության այլ զուտ հարկերի աճ:

## Համախառն ներքին արդյունքի հաշվարկն արտադրական եղանակով 2011թ.

Արտադրական եղանակով ՀՆԱ-ն տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների գումարն է, որի ծավալը ձևավորվում է որպես արտադրանքի թողարկման և միջանկյալ սպառման տարբերություն, ընդ որում ՀՆԱ-ն հաշվարկվում է շուկայական գներով, այսինքն՝ գումարվում են նաև ապրանքների զուտ (առանց սուբսիդիաների) հարկերը:

*Արտադրության հաշիվ*

/ընթացիկ գներով, մլն դրամ/

| | 2010թ. | 2011թ. |
|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | |
| Համախառն թողարկում | 204413.5 | 230654.5 |
| Ապրանքների զուտ հարկեր | 9631.7 | 10242.1 |
| **Ընդամենը** | **214045.2** | **240896.6** |
| **Օգտագործում** | | |
| Միջանկյալ սպառում | 95858.0 | 105398.1 |
| Համախառն ներքին արդյունք | 118187.2 | 135498.5 |
| **Ընդամենը** | **214045.2** | **240896.6** |

Համախառն թողարկումը հանդիսանում է ռեսուրսների ստեղծման գլխավոր աղբյուրը: 2011թ. ԼՂՀ համախառն թողարկումը կազմել է 240896.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12.8 տոկոսով: Համախառն թողարկման աճը պայմանավորված է և ապրանքների, և ծառայությունների արտադրության ոլորտների համապատասխան թողարկումների աճերով՝ համապատասխանաբար 14.1 և 11.4 տոկոսով:

Ապրանքների ստեղծման գործընթացում ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապրանքների արտադրության ոլորտներում համախառն թողարկումը կազմել է ընդհանուրի 54.2 տոկոսը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.6 տոկոսային կետով:

Ապրանքների արտադրության ոլորտի համախառն թողարկման աճը նախորդ տարվա համեմատ հիմնականում արդյունք է գյուղատնտեսության,

արդյունաբերության և անտառային տնտեսության աճերի համապատասխանաբար՝ 36.5, 9.1 և 6.0 տոկոսով:

2010-2011թթ. համախառն թողարկումների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2011թ. նախորդ տարվա համեմատ ծառայությունների արտադրության ոլորտի համախառն թողարկման տեսակարար կշիռը նվազում է ընդհանուր թողարկման մեջ՝ 0.6 տոկոսային կետով՝ պայմանավորված ապրանքների արտադրության համախառն թողարկման առաջանցիկ աճով և ոչ շուկայական ծառայությունների համախառն թողարկման նվազմամբ:

Շուկայական ծառայությունների ոլորտում համախառն թողարկումը 2011թ. 2010թ. համեմատ աճել է 14.4 տոկոսով կամ 6635.2մլն դրամով, ընդ որում վարկավորումը՝ 26.0 տոկոսով կամ 2752.7 մլն դրամով, առևտուր ու հանրային սնունդը՝ 17.3 տոկոսով կամ 2089.8մլն դրամով, կոմունալ տնտեսություն և կենցաղային ծառայությունը՝ 16.7 տոկոսով կամ 778.1մլն դրամով: Ոչ շուկայական ծառայությունների ոլորտում համախառն թողարկումը աճել է 8.5 տոկոսով, ընդ որում, կրթության ճյուղում՝ 12.8 տոկոսով կամ 1065.4մլն դրամով, կառավարում և պաշտպանության ճյուղում՝ 4.9 տոկոսով կամ 1716.1մլն դրամով:

2011թ. համախառն թողարկման կառուցվածքում նախորդ տարվա համեմատ տեղի է ունեցել միջանկյալ սպառման տեսակարար կշռի նվազում՝ 1.2 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված շինարարության (0.7 տոկոսային կետով), տրանսպորտ և կապի (3.0 տոկոսային կետով), կառավարում և պաշտպանության (11.7 տոկոսային կետով) ճյուղերի միջանկյալ սպառման կշիռների նվազմամբ:

Ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշռի նվազումը համախառն թողարկման մեջ հետևանք է 1.7 և 0.5 տոկոսային կետերով, համապատասխանաբար, գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերի ավելացված արժեքների տեսակարար կշիռների նվազման:




**Գծապատկեր 5 Բազային ճյուղերի միջանկյալ սպառման տեսակարար կշիռները համախառն թողարկման մեջ (տոկոսներով)**

Համախառն ներքին արդյունք

Կառուցվածքային տեսանկյունից առաջատար տեղ է զբաղեցրել ծառայությունների արտադրության ոլորտի ավելացված արժեքը՝ կազմելով ՀՆԱ-ի 57.4 տոկոսը և նախորդ տարվա համեմատ աճելով 2.4 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ նվազել է ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը՝ 0.9 տոկոսային կետով:

*Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը*

/տոկոսներով՝ ՀՆԱ-ի նկատմամբ/

| | 2010թ. | 2011թ. |
|---|---|---|
| *Համախառն ներքին արդյունք* | ***100.0*** | ***100.0*** |
| Ապրանքների արտադրություն | 40.9 | 40.0 |
| Ծառայությունների արտադրություն | 55.0 | 57.4 |
| *այդ թվում՝* շուկայական ծառայություններ | 27.2 | 27.7 |
| ոչ շուկայական ծառայություններ | 27.8 | 29.7 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | 4.0 | 4.9 |
| Ապրանքների զուտ հարկեր | 8.1 | 7.5 |

Ոչ շուկայական ծառայությունները հիմնականում մատուցվում են պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող հիմնարկների կողմից: Այն մատնանշում է պետական և համայնքային բյուջեների նշանակալի դերը ՀՆԱ-ի ձևավորման գործընթացում, որը 2011թ. նախորդ տարվա համեմատ աճել է 1.9 տոկոսային կետով:

2011թ. նախորդ տարվա նկատմամբ նվազել է ապրանքների զուտ հարկերի տեսակարար կշիռը՝ 0.6 տոկոսով:

Ընդհանուր առմամբ 2011թ. 2010թ. նկատմամբ ապրանքների զուտ հարկերը աճել են 610.4 մլն դրամով կամ 6.3 տոկոսով: Այն գլխավորապես պայմանավորված է ավելացված արժեքի, առևտրի և ակցիզային հարկերի ծավալների աճով՝ համապատասխանաբար 6.5, 12.7 և 21.9 տոկոսով:

## Համախառն ներքին արդյունքի հաշվարկը եկամուտների ձևավորման եղանակով 2011թ.

Եկամուտների ձևավորման եղանակով ՀՆԱ-ի հաշվարկը արտացոլում է ապրանքների և ծառայությունների արտադրությանն անմիջականորեն մասնակցած կառուցվածքային միավորների կողմից սկզբնական եկամուտների վճարները:

Համախառն ներքին արդյունք

Ըստ եկամուտների ձևավորման ՀՆԱ-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2011թ. նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրությունն աճել է 15.2 տոկոսով, իսկ համախառն շահույթն ու համախառն խառն եկամուտը՝ 15.6 տոկոսով:

*Եկամուտների ձևավորման հաշիվ*

*/ընթացիկ գներով մլն դրամ/*

| | 2010թ. | 2011թ. |
|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | |
| Համախառն ներքին արդյունք | 118187.2 | 135498.5 |
| **Ընդամենը** | **118187.2** | **135498.5** |
| **Օգտագործում** | | |
| Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն | 59330.9 | 68357.1 |
| Ապրանքների զուտ հարկեր | 9631.7 | 10242.1 |
| Արտադրության այլ զուտ հարկեր | 228.2 | 239.6 |
| Համախառն շահույթ և համախառն խառն եկամուտ | 48996.4 | 56659.7 |
| այդ թվում՝ հիմնական միջոցների օգտագործում | 9010.8 | 10422.9 |
| զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ | 39985.6 | 46236.8 |
| **Ընդամենը** | **118187.2** | **135498.5** |

Տնտեսության առանձին հատվածներում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության դինամիկայի դիտարկմամբ արձանագրվել են հետևյալ տեղաշարժերը. ապրանքների արտադրության ոլորտում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը նախորդ տարվա համեմատ աճել է 6.7 տոկոսով, իսկ ծառայությունների արտադրության ոլորտում՝ 18.4 տոկոսով, որը պայմանավորված է և շուկայական և ոչ շուկայական ծառայությունների, համապատասխանաբար, 11.3 և 21.3 տոկոս աճերով:

Ապրանքների արտադրության ոլորտում տեղ գտած վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության աճը գլխավորապես պայմանավորված է արդյունաբերության, գյուղատնտեսության, անտառտնտեսության ճյուղերում այդ ցուցանիշի 6.1-ից մինչև 25.1 տոկոս աճերով:

Ինչպես արդեն նշվել է, 2011թ. նախորդ տարվա համեմատ 15.6 տոկոսով աճել է համախառն շահույթը ու համախառն խառն եկամուտը, ընդ որում՝ հիմնական միջոցների օգտագործումն աճել է 15.7 տոկոսով, իսկ զուտ շահույթ ու զուտ խառն եկամուտը՝ 15.6 տոկոսով:

Համախառն ներքին արդյունք

2011թ. նախորդ տարվա համեմատ հիմնական միջոցների օգտագործման աճը պայմանավորված է արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, կապի, նյութատեխնիկական մատակարարման ճյուղերում այդ ցուցանիշի աճով: Ապրանքների արտադրության ոլորտում աճը կազմել է 14.1 տոկոս, իսկ ծառայությունների արտադրության ոլորտում՝ 17.0 տոկոս, ընդ որում՝ ոչ շուկայական ծառայությունների ոլորտում՝ 32.1 տոկոս:




2010թ.




2011թ.

**Գծապատկեր 6: ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ եկամուտների ձևավորման (տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ)**

2011թ. ՀՆԱ-ի՝ ըստ եկամուտների ձևավորման կառուցվածքի մեջ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության տեսակարար կշիռը կազմել է 50.4 տոկոս և 2010թ. համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով, իսկ համախառն շահույթի և համախառն խառն եկամտի տեսակարար կշիռը՝ 0.3 տոկոսային կետով: Ի հակառակ դրա ապրանքների զուտ հարկերի տեսակարար կշիռը նվազել է 0.6 տոկոսային կետով:

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ*

*Մակրոտնտեսական ցուցանիշների, ազգային հաշիվների և ֆինանսների վիճակագրության բաժին*
*հեռ.՝ 94-46-23*

*Հավելված 1*

*Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի (2009թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | *97198.1* | *54886.5* | *42311.6* |
| Արդյունաբերություն | 31451.8 | 14663.1 | 16788.7 |
| Գյուղատնտեսություն | 33990.8 | 20038.7 | 13952.1 |
| Անտառտնտեսություն | 245.2 | 18.1 | 227.1 |
| Շինարարություն | 31510.3 | 20166.7 | 11343.6 |
| *Ծառայությունների արտադրություն* | *79255.4* | *24271.6* | *54983.7* |
| *Շուկայական ծառայություններ* | *40674.1* | *13377.5* | *27296.6* |
| Տրանսպորտ | 7267.9 | 4501.9 | 2766.0 |
| Կապ | 6403.2 | 1719.3 | 4683.9 |
| Առևտուր և հանրային սնունդ | 10263.0 | 3078.9 | 7184.1 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 1903.4 | 280.3 | 1623.1 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 54.8 | 12.0 | 42.8 |
| Խմբագրություն | 161.7 | 46.5 | 115.2 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 188.5 | 33.5 | 155.0 |
| Երկրաբանություն | 23.7 | 7.2 | 16.5 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 247.0 | 21.2 | 225.8 |
| Բնակարանային տնտեսություն | 110.8 | 36.0 | 74.8 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 3462.2 | 2292.4 | 1169.8 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 703.9 | 263.0 | 440.9 |
| Կրթություն | 1358.6 | 306.8 | 1051.8 |
| Մշակույթ և արվեստ | 608.7 | 63.2 | 545.5 |
| Վարկավորում | 7697.7 | 645.8 | 7051.9 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 219.0 | 69.6 | 149.4 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *38581.3* | *10894.2* | *27687.1* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 598.3 | 394.0 | 204.3 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 3045.1 | 891.6 | 2153.5 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 204.8 | 58.5 | 146.3 |
| Կրթություն | 8216.5 | 649.8 | 7566.7 |
| Մշակույթ և արվեստ | 803.6 | 101.3 | 702.3 |
| Կառավարում և պաշտպանություն | 25549.7 | 8782.7 | 16767.0 |
| Հասարակական կազմակերպություններ | 163.3 | 16.3 | 147.0 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | | 3283.2 | -3283.2 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | **176453.5** | **82441.3** | **94012.1** |
| Զուտ հարկեր | | | 8326.6 |
| **Համախառն ներքին արդյունք** | | | **102338.7** |

*Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի (2009թ.)*

*/տոկոսներով ընդամենի նկատմամբ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | *55.1* | *66.6* | *41.4* |
| Արդյունաբերություն | 17.8 | 17.8 | 16.4 |
| Գյուղատնտեսություն | 19.3 | 24.3 | 13.7 |
| Անտառտնտեսություն | 0.1 | 0.0 | 0.2 |
| Շինարարություն | 17.9 | 24.5 | 11.1 |
| *Ծառայությունների արտադրություն* | *44.9* | *29.4* | *53.7* |
| *Շուկայական ծառայություններ* | *23.0* | *16.2* | *26.7* |
| Տրանսպորտ | 4.1 | 5.5 | 2.7 |
| Կապ | 3.6 | 2.1 | 4.6 |
| Առևտուր և հանրային սնունդ | 5.8 | 3.7 | 7.0 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 1.1 | 0.3 | 1.6 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 0.0 | 0.0 | 0.1 |
| Խմբագրություն | 0.1 | 0.1 | 0.1 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 0.1 | 0.0 | 0.2 |
| Երկրաբանություն | 0.0 | 0.0 | 0.0 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 0.1 | 0.0 | 0.2 |
| Բնակարանային տնտեսություն | 0.1 | 0.0 | 0.1 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 2,0 | 2.8 | 1.2 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 0.4 | 0.3 | 0.4 |
| Կրթություն | 0.8 | 0.4 | 1.0 |
| Մշակույթ և արվեստ | 0.3 | 0.1 | 0.5 |
| Վարկավորում | 4.4 | 0.8 | 6.9 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 0.1 | 0.1 | 0.1 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *21.9* | *13.2* | *27.0* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 0.3 | 0.5 | 0.2 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 1.7 | 1.1 | 2.1 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 0.1 | 0.1 | 0.1 |
| Կրթություն | 4.7 | 0.8 | 7.4 |
| Մշակույթ և արվեստ | 0.5 | 0.1 | 0.7 |
| Կառավարում և պաշտպանություն | 14.5 | 10.6 | 16.4 |
| Հասարակական կազմակերպություններ | 0.1 | 0.0 | 0.1 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | | 4.0 | -3.2 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | **100.0** | **100.0** | **91.9** |
| Զուտ հարկեր | | | 8.1 |
| **Համախառն ներքին արդյունք** | | | **100.0** |

*Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների (2009թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | I | II | III | IV | Տարի |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| Համախառն թողարկում | 26766.7 | 43107.2 | 53944.0 | 52635.6 | 176453.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 11287.5 | 23372.5 | 34842.4 | 27695.7 | 97198.1 |
| Ծառայությունների արտադրություն | 15479.2 | 19734.7 | 19101.6 | 24939.8 | 79255.3 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | 7365.9 | 9503.2 | 10230.6 | 13574.3 | 40674.0 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | 8113.3 | 10231.5 | 8871.0 | 11365.5 | 38581.3 |
| Զուտ հարկեր | 1282.1 | 1959.8 | 2411.1 | 2673.6 | 8326.6 |
| **Ընդամենը** | **28048.8** | **45067.0** | **56355.1** | **55309.2** | **184780.1** |
| **Օգտագործում** | | | | | |
| Միջանկյալ սպառում | 10769.4 | 19555.3 | 29795.9 | 22320.8 | 82441.4 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 6224.3 | 13093.8 | 23149.6 | 12418.8 | 54886.5 |
| Ծառայությունների արտադրություն | 3891.5 | 5686.6 | 5801.0 | 8892.6 | 24271.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *2380.1* | *2889.7* | *2988.0* | *5119.7* | *13377.5* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *1511.4* | *2796.9* | *2813.0* | *3772.9* | *10894.2* |
| Համախառն ներքին արդյունք | 17279.4 | 25511.7 | 26559.2 | 32988.4 | 102338.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 5063.2 | 10278.7 | 11692.9 | 15276.8 | 42311.6 |
| Ծառայությունների արտադրություն | 11587.6 | 14048.2 | 13300.5 | 16047.4 | 54983.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *4985.7* | *6613.5* | *7242.6* | *8454.8* | 27296.6 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *6601.9* | *7434.7* | *6057.9* | *7592.6* | 27687.1 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | 653.5 | 775.0 | 845.3 | 1009.4 | 3283.2 |
| Զուտ հարկեր | 1282.1 | 1959.8 | 2411.1 | 2673.6 | 8326.6 |
| **Ընդամենը** | **28048.8** | **45067.0** | **56355.1** | **55309.2** | **184780.1** |

*Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների (2009թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | I | II | III | IV | Տարի |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| Համախառն ներքին արդյունք | 17279.4 | 25511.7 | 26559.2 | 32988.4 | 102338.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 5063.2 | 10278.7 | 11692.9 | 15276.8 | 42311.6 |
| Ծառայությունների արտադրություն | 11587.6 | 14048.2 | 13300.5 | 16047.4 | 54983.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *4985.7* | *6613.5* | *7242.6* | *8454.8* | *27296.6* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *6601.9* | *7434.7* | *6057.9* | *7592.6* | *27687.1* |
| **Ընդամենը** | **17279.4** | **25511.7** | **26559.2** | **32988.4** | **102338.7** |
| **Օգտագործում** | | | | | |
| Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն | 11502.7 | 12880.1 | 13067.8 | 15884.1 | 53334.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 2680.6 | 3173.2 | 4359.9 | 5326.4 | 15540.1 |
| Ծառայությունների արտադրություն | 8822.0 | 9706.9 | 8707.9 | 10557.8 | 37794.6 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *2751.9* | *2612.7* | *3376.4* | *2986.9* | *11727.9* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *6070.1* | *7094.2* | *5331.5* | *7570.9* | *26066.7* |
| Հիմնական միջոցների օգտագործում | 1404.0 | 1365.4 | 1715.8 | 3269.0 | 7754.2 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 374.7 | 416.8 | 434.6 | 2061.7 | 3287.8 |
| Ծառայությունների արտադրություն | 1029.3 | 948.6 | 1281.2 | 1207.3 | 4466.4 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *497.8* | *608.5* | *554.0* | *1185.6* | *2845.9* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *531.5* | *340.1* | *727.2* | *21.7* | *1620.5* |
| Զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ | 3057.1 | 9259.9 | 9316.9 | 11082.3 | 32716.2 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 1991.1 | 6660.5 | 6868.9 | 7837.6 | 23358.1 |
| Ծառայությունների արտադրություն | 1719.6 | 3374.4 | 3293.3 | 4254.0 | 12641.3 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *1719.3* | *3374.0* | *3294.0* | *4254.0* | *12641.3* |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | -653.5 | -775.0 | -845.3 | -1009.4 | -3283.2 |
| Արտադրության այլ զուտ հարկեր | 33.6 | 46.5 | 47.5 | 79.4 | 207.0 |
| Զուտ հարկեր | 1282.1 | 1959.8 | 2411.1 | 2673.6 | 8326.6 |
| **Ընդամենը** | **17279.4** | **25511.7** | **26559.2** | **32988.4** | **102338.7** |

*Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի (2010թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | *109655.6* | *61368.7* | *48286.9* |
| Արդյունաբերություն | 39249.6 | 18896.1 | 20353.5 |
| Գյուղատնտեսություն | 32608.3 | 19562.4 | 13045.9 |
| Անտառտնտեսություն | 266.2 | 16.0 | 250.2 |
| Շինարարություն | 37531.5 | 22894.2 | 14637.3 |
| *Ծառայությունների արտադրություն* | *94757.9* | *29698.3* | *65059.6* |
| *Շուկայական ծառայություններ* | *46182.0* | *14046.8* | *32135.2* |
| Տրանսպորտ | 5261.3 | 2379.3 | 2882.0 |
| Կապ | 7125.5 | 1798.3 | 5327.2 |
| Առևտուր և հանրային սնունդ | 12092.3 | 4050.9 | 8041.4 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 1947.3 | 368.7 | 1578.6 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 139.6 | 61.4 | 78.2 |
| Խմբագրություն | 163.7 | 52.2 | 111.5 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 257.3 | 57.2 | 200.1 |
| Երկրաբանություն | 23.5 | 6.4 | 17.1 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 296.4 | 56.1 | 240.3 |
| Բնակարանային տնտեսություն | 101.8 | 32.5 | 69.3 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 4670.7 | 3285 | 1385.7 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 666.8 | 251.5 | 415.3 |
| Կրթություն | 1638.8 | 358.8 | 1280.0 |
| Մշակույթ և արվեստ | 586.6 | 45.0 | 541.6 |
| Վարկավորում | 10588.5 | 868 | 9720.5 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 621.9 | 375.5 | 246.4 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *48575.9* | *15651.5* | *32924.4* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 540.5 | 188.1 | 352.4 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 3013.7 | 799.6 | 2214.1 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 318.8 | 159.1 | 159.7 |
| Կրթություն | 8293.1 | 591.7 | 7701.4 |
| Մշակույթ և արվեստ | 880.5 | 105.0 | 775.5 |
| Կառավարում և պաշտպանություն | 35365.2 | 13791.6 | 21573.6 |
| Հասարակական կազմակերպություններ | 164.1 | 16.4 | 147.7 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | | 4791.0 | -4791.0 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | **204413.5** | **95858.0** | **108555.5** |
| Զուտ հարկեր | | | 9631.7 |
| **Համախառն ներքին արդյունք** | | | **118187.2** |

*Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի (2010թ.)*

*/տոկոսներով ընդամենի նկատմամբ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | *53.6* | *64.0* | *40.9* |
| Արդյունաբերություն | 19.2 | 19.7 | 17.2 |
| Գյուղատնտեսություն | 15.9 | 20.4 | 11.1 |
| Անտառտնտեսություն | 0.1 | 0.0 | 0.2 |
| Շինարարություն | 18.4 | 23.9 | 12.4 |
| *Ծառայությունների արտադրություն* | *46.4* | *31.0* | *55.1* |
| *Շուկայական ծառայություններ* | *22.6* | *14.7* | *27.2* |
| Տրանսպորտ | 2.6 | 2.5 | 2.4 |
| Կապ | 3.5 | 1.9 | 4.5 |
| Առևտուր և հանրային սնունդ | 5.9 | 4.2 | 6.8 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 1.0 | 0.4 | 1.3 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 0.1 | 0.1 | 0.1 |
| Խմբագրություն | 0.1 | 0.1 | 0.1 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 0.1 | 0.1 | 0.2 |
| Երկրաբանություն | 0.0 | 0.0 | 0.0 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 0.1 | 0.1 | 0.2 |
| Բնակարանային տնտեսություն | 0.0 | 0.0 | 0.1 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 2.3 | 3.4 | 1.2 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 0.3 | 0.2 | 0.3 |
| Կրթություն | 0.8 | 0.4 | 1.1 |
| Մշակույթ և արվեստ | 0.3 | 0 | 0.5 |
| Վարկավորում | 5.2 | 0.9 | 8.2 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 0.3 | 0.4 | 0.2 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *23.8* | *16.3* | *27.9* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 0.3 | 0.2 | 0.3 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 1.5 | 0.8 | 1.9 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 0.2 | 0.2 | 0.1 |
| Կրթություն | 4.0 | 0.6 | 6.5 |
| Մշակույթ և արվեստ | 0.4 | 0.1 | 0.7 |
| Կառավարում և պաշտպանություն | 17.3 | 14.4 | 18.3 |
| Հասարակական կազմակերպություններ | 0.1 | 0.0 | 0.1 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | | 5.0 | -4.1 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | **100.0** | **100.0** | **91.9** |
| Զուտ հարկեր | | | 8.1 |
| **Համախառն ներքին արդյունք** | | | **100.0** |

*Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների (2010թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | I | II | III | IV | Տարի |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| Համախառն թողարկում | 35502.2 | 47290.0 | 60590.7 | 61030.6 | 204413.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 17061.7 | 25089.8 | 35950.2 | 31553.9 | 109655.6 |
| Ծառայությունների արտադրություն | 18440.5 | 22200.2 | 24640.5 | 29476.7 | 94757.9 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *9199.6* | *10887.9* | *11922.9* | *14171.6* | *46182.0* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *9240.9* | *11312.3* | *12717.6* | *15305.1* | *48575.9* |
| Զուտ հարկեր | 1745.3 | 2269.7 | 2503.5 | 3113.2 | 9631.7 |
| **Ընդամենը** | **37247.5** | **49559.7** | **63094.2** | **64143.8** | **214045.2** |
| **Օգտագործում** | | | | | |
| Միջանկյալ սպառում | 16275.2 | 21072.9 | 31041.1 | 27468.8 | 95858.0 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 10003.4 | 13883.7 | 22856.5 | 14625.1 | 61368.7 |
| Ծառայությունների արտադրություն | 5255.5 | 5994.8 | 6978.1 | 11469.8 | 29698.2 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *3011.3* | *2775.6* | *3622.1* | *4637.8* | *14046.8* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *2244.2* | *3219.2* | *3356.0* | *6832.0* | *15651.4* |
| Համախառն ներքին արդյունք | 20972.3 | 28486.8 | 32053.1 | 36675.0 | 118187.2 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 7058.3 | 11206.1 | 13093.8 | 16928.7 | 48286.9 |
| Ծառայությունների արտադրություն | 13185.0 | 16205.4 | 17662.3 | 18006.9 | 65059.6 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *6188.3* | *8112.4* | *8300.7* | *9533.8* | *32135.2* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *6996.7* | *8093.0* | *9361.6* | *8473.1* | *32924.4* |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | -1016.3 | -1194.4 | -1206.5 | -1373.8 | -4791.0 |
| Զուտ հարկեր | 1745.3 | 2269.7 | 2503.5 | 3113.2 | 9631.7 |
| **Ընդամենը** | **37247.5** | **49559.7** | **63094.2** | **64143.8** | **214045.2** |

*Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների (2010թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | I | II | III | IV | Տարի |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| Համախառն ներքին արդյունք | 20972.3 | 28486.8 | 32053.1 | 36675.0 | 118187.2 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 7058.3 | 11206.1 | 13093.8 | 16928.7 | 48286.9 |
| Ծառայությունների արտադրություն | 13185.0 | 16205.4 | 17662.3 | 18006.9 | 65059.6 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *6188.3* | *8112.4* | *8300.7* | *9533.8* | *32135.2* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *6996.7* | *8093.0* | *9361.6* | *8473.1* | *32924.4* |
| **Ընդամենը** | **20972.3** | **28486.8** | **32053.1** | **36675.0** | **118187.2** |
| **Օգտագործում** | | | | | |
| Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն | 12677.6 | 14936.7 | 16268.2 | 15448.4 | 59330.9 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 3230.9 | 4082.3 | 4674.7 | 4107.4 | 16095.3 |
| Ծառայությունների արտադրություն | 9446.7 | 10854.4 | 11593.5 | 11341.0 | 43235.6 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *3010.3* | *3096.0* | *3084.2* | *3426.7* | *12617.2* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *6436.4* | *7758.4* | *8509.3* | *7914.3* | *30618.4* |
| Հիմնական միջոցների օգտագործում | 1722.8 | 1621.1 | 2347.5 | 3319.4 | 9010.8 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 627.1 | 604.0 | 927.6 | 1960.4 | 4119.1 |
| Ծառայությունների արտադրություն | 1095.7 | 1017.1 | 1419.9 | 1359.0 | 4891.7 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *535.7* | *682.9* | *568.3* | *800.4* | *2587.3* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *560.0* | *334.2* | *851.6* | *558.6* | *2304.4* |
| Զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ | 4790.4 | 9611.6 | 10882.6 | 14701.0 | 39985.6 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 3181.0 | 6492.1 | 7460.0 | 10802.3 | 27935.4 |
| Ծառայությունների արտադրություն | 2625.7 | 4313.8 | 4629.2 | 5272.4 | 16841.1 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *2625.5* | *4313.3* | *4628.4* | *5272.3* | *16839.5* |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | -1016.3 | -1194.4 | -1206.5 | -1373.8 | -4791.0 |
| Արտադրության այլ զուտ հարկեր | 36.2 | 47.7 | 51.3 | 93.0 | 228.2 |
| Զուտ հարկեր | 1745.3 | 2269.7 | 2503.5 | 3113.2 | 9631.7 |
| **Ընդամենը** | **20972.3** | **28486.8** | **32053.1** | **36675.0** | **118187.2** |

*Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով ըստ ճյուղերի (2011թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | 125125.9 | 70952.9 | 54173.0 |
| Արդյունաբերություն | 42831.0 | 20850.2 | 21980.8 |
| Գյուղատնտեսություն | 44519.0 | 27474.4 | 17044.6 |
| Անտառտնտեսություն | 282.3 | 19.7 | 262.6 |
| Շինարարություն | 37493.6 | 22608.6 | 14885.0 |
| *Ծառայությունների արտադրություն* | *105528.6* | *27765.6* | *77763.0* |
| *Շուկայական ծառայություններ* | *52817.2* | *15250.2* | *37567.0* |
| Տրանսպորտ | 5086.3 | 2047.1 | 3039.2 |
| Կապ | 7267.1 | 1743.0 | 5524.1 |
| Առևտուր և հանրային սնունդ | 14182.1 | 4751.0 | 9431.1 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 1990.8 | 346.4 | 1644.4 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 99.2 | 25.8 | 73.4 |
| Խմբագրություն | 207.1 | 44.8 | 162.3 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 371.2 | 109.3 | 261.9 |
| Երկրաբանություն | 37.1 | 10.3 | 26.8 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 294.9 | 27.7 | 267.2 |
| Բնակարանային տնտեսություն | 102.2 | 29.0 | 73.2 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 5448.8 | 3610.2 | 1838.6 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 1071.5 | 437.8 | 633.7 |
| Կրթություն | 2065.2 | 665.1 | 1400.1 |
| Մշակույթ և արվեստ | 582.1 | 36.1 | 546.0 |
| Վարկավորում | 13341.2 | 1117.5 | 12223.7 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 670.4 | 249.1 | 421.3 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *52711.4* | *12515.4* | *40196.0* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 554.7 | 186.1 | 368.6 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 3772.0 | 729.5 | 3042.5 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 464.9 | 248.8 | 216.1 |
| Կրթություն | 9358.5 | 948.4 | 8410.1 |
| Մշակույթ և արվեստ | 1299.3 | 267.8 | 1031.5 |
| Կառավարում և պաշտպանություն | 37081.3 | 10116.7 | 26964.6 |
| Հասարակական կազմակերպություններ | 180.7 | 18.1 | 162.6 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | | 6679.6 | -6679.6 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | **230654.5** | **105398.1** | **125256.4** |
| Զուտ հարկեր | | | 10242.1 |
| **Համախառն ներքին արդյունք** | | | **135498.5** |

*Համախառն ներքին արդյունքի կառուցվածքն ըստ ճյուղերի (2011թ.)*

*/տոկոսներով ընդամենի նկատմամբ/*

| | Համախառն թողարկում | Միջանկյալ սպառում | Համախառն ավելացված արժեք |
|---|---|---|---|
| *Ապրանքների արտադրություն* | *54.2* | *67.3* | *40.0* |
| Արդյունաբերություն | 18.6 | 19.8 | 16.2 |
| Գյուղատնտեսություն | 19.3 | 26.1 | 12.6 |
| Անտառտնտեսություն | 0.1 | 0.0 | 0.2 |
| Շինարարություն | 16.2 | 21.4 | 11.0 |
| *Ծառայությունների արտադրություն* | 45.8 | 26.4 | 57.4 |
| *Շուկայական ծառայություններ* | *22.9* | *14.5* | *27.7* |
| Տրանսպորտ | 2.2 | 2.0 | 2.2 |
| Կապ | 3.1 | 1.7 | 4.1 |
| Առևտուր և հանրային սնունդ | 6.1 | 4.5 | 7.0 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 0.9 | 0.3 | 1.2 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 0.0 | 0.0 | 0.1 |
| Խմբագրություն | 0.1 | 0.0 | 0.1 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 0.2 | 0.1 | 0.2 |
| Երկրաբանություն | 0.0 | 0.0 | 0.0 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 0.1 | 0.0 | 0.2 |
| Բնակարանային տնտեսություն | 0.0 | 0.0 | 0.1 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 2.4 | 3.4 | 1.3 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 0.5 | 0.4 | 0.5 |
| Կրթություն | 0.9 | 0.7 | 1.0 |
| Մշակույթ և արվեստ | 0.3 | 0.0 | 0.4 |
| Վարկավորում | 5.8 | 1.1 | 9.0 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 0.3 | 0.3 | 0.3 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *22.9* | *11.9* | *29.7* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 0.2 | 0.2 | 0.3 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 1.6 | 0.7 | 2.2 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 0.2 | 0.2 | 0.2 |
| Կրթություն | 4.1 | 0.9 | 6.2 |
| Մշակույթ և արվեստ | 0.6 | 0.3 | 0.8 |
| Կառավարում և պաշտպանություն | 16.1 | 9.6 | 19.9 |
| Հասարակական կազմակերպություններ | 0.1 | 0.0 | 0.1 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | | 6.3 | -4.9 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | 100.0 | 100.0 | 92.5 |
| Զուտ հարկեր | | | 7.5 |
| **Համախառն ներքին արդյունք** | | | 100.0 |

## *Արտադրության հաշիվն ըստ եռամսյակների (2011թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | I | II | III | IV | Տարի |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| Համախառն թողարկում | 38524.1 | 53695.5 | 72727.4 | 65707.5 | 230654.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 18686.7 | 26717.0 | 44630.6 | 35091.6 | 125125.9 |
| Ծառայությունների արտադրություն | 19837.4 | 26978.5 | 28096.8 | 30615.9 | 105528.6 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *11650.0* | *11835.5* | *14072.3* | *15259.4* | *52817.2* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *8187.4* | *15143.0* | *14024.5* | *15356.5* | *52711.4* |
| Զուտ հարկեր | 1949.5 | 2243.8 | 2890.6 | 3158.2 | 10242.1 |
| **Ընդամենը** | **40473.6** | **55939.3** | **75618.0** | **68865.7** | **240896.6** |
| **Օգտագործում** | | | | | |
| Միջանկյալ սպառում | 16892.2 | 25073.4 | 37899.1 | 25533.4 | 105398.1 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 11108.7 | 14432.3 | 28815.8 | 16596.1 | 70952.9 |
| Ծառայությունների արտադրություն | 4271.5 | 9060.2 | 7371.1 | 7062.8 | 27765.6 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *3425.3* | *3039.8* | *4034.0* | *4751.1* | *15250.2* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *846.2* | *6020.4* | *3337.1* | *2311.7* | *12515.4* |
| Համախառն ներքին արդյունք | 23581.4 | 30865.9 | 37718.9 | 43332.3 | 135498.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 7578.0 | 12284.7 | 15814.8 | 18495.5 | 54173.0 |
| Ծառայությունների արտադրություն | 15565.9 | 17918.3 | 20725.7 | 23553.1 | 77763.0 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *8224.7* | *8795.7* | *10038.3* | *10508.3* | *37567.0* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *7341.2* | *9122.6* | *10687.4* | *13044.8* | *40196.0* |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | -1512.0 | -1580.9 | -1712.1 | -1874.6 | -6679.6 |
| Զուտ հարկեր | 1949.5 | 2243.8 | 2890.5 | 3158.3 | 10242.1 |
| **Ընդամենը** | **40473.6** | **55939.3** | **75618.0** | **68865.7** | **240896.6** |

## *Եկամուտների ձևավորման հաշիվն ըստ եռամսյակների (2011թ.)*

*/ընթացիկ գներով, մլն դրամ/*

| | I | II | III | IV | Տարի |
|---|---|---|---|---|---|
| **Ռեսուրսներ** | | | | | |
| Համախառն ներքին արդյունք | 23581.4 | 30865.9 | 37718.9 | 43332.3 | 135498.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 7578.0 | 12284.7 | 15814.8 | 18495.5 | 54173.0 |
| Ծառայությունների արտադրություն | 15565.9 | 17918.3 | 20725.7 | 23553.1 | 77763.0 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *8224.7* | *8795.7* | *10038.3* | *10508.3* | *37567.0* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *7341.2* | *9122.6* | *10687.4* | *13044.8* | *40196.0* |
| **Ընդամենը** | **23581.4** | **30865.9** | **37718.9** | **43332.3** | **135498.5** |
| **Օգտագործում** | | | | | |
| Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն | 13501.5 | 16520.0 | 16812.4 | 21523.2 | 68357.1 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 3265.6 | 4590.0 | 4524.7 | 4786.6 | 17166.9 |
| Ծառայությունների արտադրություն | 10235.9 | 11930.0 | 12287.7 | 16736.6 | 51190.2 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *3440.4* | *3216.4* | *3431.8* | *3950.6* | *14039.2* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *6795.5* | *8713.6* | *8855.9* | *12786.0* | *37151.0* |
| Հիմնական միջոցների օգտագործում | 1669.4 | 2290.9 | 3097.7 | 3364.9 | 10422.9 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 651.5 | 1285.2 | 687.9 | 2076.8 | 4701.4 |
| Ծառայությունների արտադրություն | 1017.9 | 1005.7 | 2409.8 | 1288.1 | 5721.5 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | *472.4* | *597.4* | *579.1* | *1029.6* | *2678.5* |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *545.5* | *408.3* | *1830.7* | *258.5* | *3043.0* |
| Զուտ շահույթ և զուտ խառն եկամուտ | 6425.6 | 9761.2 | 14867.4 | 15182.6 | 46236.8 |
| այդ թվում՝ | | | | | |
| Ապրանքների արտադրություն | 3643.7 | 6380.3 | 10571.4 | 11567.7 | 32163.1 |
| Ծառայությունների արտադրություն | 4293.9 | 4961.8 | 6008.1 | 5489.5 | 20753.3 |
| այդ թվում՝ | | | | | |
| *Շուկայական ծառայություններ* | 4293.6 | 4961.2 | 6007.4 | 5489.1 | 20751.3 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | -1512.0 | -1580.9 | -1712.1 | -1874.6 | -6679.6 |
| Արտադրության այլ զուտ հարկեր | 35.4 | 50.0 | 50.9 | 103.3 | 239.6 |
| Զուտ հարկեր | 1949.5 | 2243.8 | 2890.5 | 3158.3 | 10242.1 |
| **Ընդամենը** | **23581.4** | **30865.9** | **37718.9** | **43332.3** | **135498.5** |

## *Համախառն ներքին արդյունքը 2009-2011թթ.*

| | Մլն դրամ | | | Տոկոսով ընդամենի նկատմամբ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2009թ. | 2010թ. | 2011թ. | 2009թ. | 2010թ. | 2011թ. |
| *Ապրանքների արտադրություն* | *42311.8* | *48286.9* | *54173.0* | *41.4* | *40.9* | *40.0* |
| Արդյունաբերություն | 16788.7 | 20353.5 | 21980.8 | 16.4 | 17.2 | 16.2 |
| Գյուղատնտեսություն | 13952.1 | 13045.9 | 17044.6 | 13.7 | 11.1 | 12.6 |
| Անտառտնտեսություն | 227.1 | 250.2 | 262.6 | 0.2 | 0.2 | 0.2 |
| Շինարարություն | 11343.8 | 14637.3 | 14885.0 | 11.1 | 12.4 | 11.0 |
| *Ծառայությունների արտադրություն* | *54983.5* | *65059.6* | *77763.0* | *53.7* | *55.1* | *57.4* |
| *Շուկայական ծառայություններ* | *27296.4* | *32135.2* | *37567.0* | *26.7* | *27.2* | *27.7* |
| Տրանսպորտ | 2766.0 | 2882.0 | 3039.2 | 2.7 | 2.4 | 2.2 |
| Կապ | 4683.9 | 5327.2 | 5524.1 | 4.6 | 4.5 | 4.1 |
| Առևտուր և հանրային սնունդ | 7184.1 | 8041.4 | 9431.1 | 7.0 | 6.8 | 7.0 |
| Նյութատեխնիկական մատակարարում | 1623.1 | 1578.6 | 1644.4 | 1.6 | 1.3 | 1.2 |
| Ինֆորմացիոն հաշվողական սպասարկում | 42.8 | 78.2 | 73.4 | 0.1 | 0.1 | 0.1 |
| Խմբագրություն | 115.2 | 111.5 | 162.3 | 0.1 | 0.1 | 0.1 |
| Գործարքներ անշարժ գույքի հետ | 155.0 | 200.1 | 261.9 | 0.2 | 0.2 | 0.2 |
| Երկրաբանություն | 16.5 | 17.1 | 26.8 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Նյութական արտադրության այլ ճյուղեր | 225.7 | 240.3 | 267.2 | 0.2 | 0.2 | 0.2 |
| Բնակարանային տնտեսություն | 74.7 | 69.3 | 73.2 | 0.1 | 0.1 | 0.1 |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 1169.8 | 1385.7 | 1838.6 | 1.2 | 1.2 | 1.3 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 440.9 | 415.3 | 633.7 | 0.4 | 0.3 | 0.5 |
| Կրթություն | 1051.8 | 1280.0 | 1400.1 | 1.0 | 1.1 | 1.0 |
| Մշակույթ և արվեստ | 545.5 | 541.6 | 546.0 | 0.5 | 0.5 | 0.4 |
| Վարկավորում | 7051.9 | 9720.5 | 12223.7 | 6.9 | 8.2 | 9.0 |
| Ոչ նյութական ոլորտի այլ ճյուղեր | 149.4 | 246.4 | 421.3 | 0.1 | 0.2 | 0.3 |
| *Ոչ շուկայական ծառայություններ* | *27687.1* | *32924.4* | *40196.0* | *27.0* | *27.9* | *29.7* |
| Կոմունալ տնտեսություն և կենցաղային սպասարկում | 204.3 | 352.4 | 368.6 | 0.2 | 0.3 | 0.3 |
| Առողջապահություն և սոցիալական ապահովություն | 2153.5 | 2214.1 | 3042.5 | 2.1 | 1.9 | 2.2 |
| Ֆիզկուլտուրա և սպորտ | 146.3 | 159.7 | 216.1 | 0.1 | 0.1 | 0.2 |
| Կրթություն | 7566.7 | 7701.4 | 8410.1 | 7.4 | 6.5 | 6.2 |
| Մշակույթ և արվեստ | 702.3 | 775.5 | 1031.5 | 0.7 | 0.7 | 0.8 |
| Կառավարում և պաշտպանություն | 16767.0 | 21573.6 | 26964.6 | 16.4 | 18.3 | 19.9 |
| Հասարակական կազմակերպություններ | 147.0 | 147.7 | 162.6 | 0.1 | 0.1 | 0.1 |
| Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-) | -3283.3 | -4791.0 | -6679.6 | -3.2 | -4.1 | -4.9 |
| **Ընդամենը ըստ ճյուղերի** | **94012.0** | **108555.5** | **125256.4** | **91.9** | **91.9** | **92.5** |
| Զուտ հարկեր | 8326.6 | 9631.7 | 10242.1 | 8.1 | 8.1 | 7.5 |
| **Համախառն ներքին արդյունք** | **102338.7** | **118187.2** | **135498.5** | **100.0** | **100.0** | **100.0** |

*Հավելված 2*

## Մեթոդաբանական ցուցումներ

*Համախառն ներքին արդյունքն* (ՀՆԱ) ազգային հաշիվների կարևորագույն ցուցանիշներից մեկն է, բնութագրում է երկրում՝ տնտեսության բոլոր ճյուղերում արտադրված ապրանքների և ծառայությունների արժեքը՝ վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար նախատեսվող:

*ՀՆԱ-ի դեֆլյատորն* իրենից ներկայացնում է փաստացի գներով ՀՆԱ-ի հարաբերակցությունը դրա՝ նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ծավալի վրա:

*Ապրանքների և ծառայությունների թողարկումը* իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում ազգային տնտեսության ռեզիդենտ-միավորների արտադրական գործունեության արդյունք հանդիսացող ապրանքների և ծառայությունների գումարային արժեքը: Իրացված ապրանքներն ու ծառայությունները թողարկման մեջ են ներառվում փաստացի իրացման արժեքով, իսկ չիրացված պատրաստի արտադրանքը և անավարտ արտադրությունը՝ միջին շուկայական գներով:

*Միջանկյալ սպառումը* արտացոլում է արտադրության պրոցեսում սպառվող կամ վերափոխվող ապրանքների և ծառայությունների արժեքը (բացառությամբ հիմնական ֆոնդերի, որոնք հաշվարկվում են որպես հիմնական կապիտալի սպառում): Այդ ապրանքները և ծառայությունները կարող են կամ լրիվությամբ սպառվել, կամ էլ վերափոխվել արտադրության գործընթացում:

*Ապրանքը* հանդիսանում է նյութական օբյեկտ, որի նկատմամբ գոյություն ունի պահանջարկ և կարող է հաստատվել սեփականության իրավունք: Սեփականության իրավունքը կարող է փոխանցվել մեկ ինստիտուցիոնալ միավորից մյուսին՝ շուկայական գործարքի իրականացման միջոցով:

*Ծառայությունները* հանդիսանում են տարաբնույթ գործունեության արդյունք, որն իրականացվում է սպառողի պատվերով և սովորաբար բերում է սպառող միավորի վիճակի փոփոխության:

*Շուկայական* են համարվում այն ծառայությունները, որոնք տնտեսական նշանակություն ունեցող գներով իրացվում են շուկայում:

*Ոչ շուկայական* են կոչվում անհատական և կոլեկտիվ բնույթի այն ծառայությունները, որոնք մատուցվում են պետական կառավարման մարմինների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից՝ անվճար կամ տնտեսական նշանակություն չունեցող գներով:

*Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունն* իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանում վարձու աշխատողի կողմից կատարած աշխատանքի դիմաց կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից վճարած դրամական և բնեղեն բոլոր վարձատրությունների հանրագումարը: Այն հաշվի է առնվում հաշվեգրված գումարների հիման վրա և ներառում է նաև գործուղման ծախսերի մի մասը, սոցիալական ապահովագրության հատկացումները և սոցիալական ապահովության այլ հատկացումները:

*Ապրանքների և ներմուծման հարկերն* իրենց մեջ ընդգրկում են ապրանքների և ներմուծման հարկերը: Ապրանքների հարկերը դրանք այն հարկերն են, որոնք ուղղակիորեն կախված են արտադրված արտադրանքի և ցուցաբերված ծառայությունների արժեքից՝ իրենց բնույթով դրանց կարելի է համարել անուղղակի հարկեր (ազգային հաշիվների համակարգում ընդունված չէ այդպիսի դասակարգման կիրառումը): Այդ հարկերից են ավելացված արժեքի հարկը, ակցիզները և այլն, իսկ ներմուծման հարկերը դրանք ներմուծվող ապրանքների և ծառայությունների հարկերն են:

*Արտադրության այլ զուտ հարկերն* արտադրության գործոնների (հող, կապիտալ, աշխատանք) օգտագործման հետ կապված հարկերն են: Դրանց թվին են դասվում հողի, արտադրության մեջ օգտագործվող շենքերի ու սարքավորումների (հիմնական միջոցների) հարկերը, լիցենզիաների դիմաց վճարները, համանման այլ գանձումները: Դրանք կախված չեն արտադրության ծավալներից և չեն ներառում ստացած շահույթից և այլ եկամուտներից հաշվարկված հարկերը:

*«Զուտ»* տերմինը նշանակում է, որ հարկերը ցույց են տրվում առանց սուբսիդիաների:

*Տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը եկամուտները* իրենցից ներկայացնում են ավելացած արժեքի այն մասը, որ մնում է արտադրողների մոտ վարձու աշխատողներին աշխատանքի վարձատրության հետ կապված ծախսերը և արտադրության ու ներմուծման զուտ հարկերը հանելուց հետո (ներառում է ամորտիզացիոն մասհանումները): Համախառն շահույթը իր մեջ չի պարունակում աշխատանքի վարձատրության տարր, ինչպես նաև գործուղումների, ներկայացուցչական ծախսերի գերնորմատիվային վճարումները, չի ընդգրկում ակտիվների գների բարձրացման արդյունքում ձևավորված շահույթը: Այն ներառում է հիմնական կապիտալի սպառումը:

*Համախառն խառը* եկամուտը աշխատանքի վարձատրության տարր է, որը հնարավոր չէ առանձնացնել ձեռներեցի կամ սեփականատիրոջ եկամտից: